Հաստատված է՝

Հայկական բժշկական ինստիտուտի

Ռեկտորի 29.08.2017թ.

թիվ 619§2/19 հրամանով

Ընդունված է՝

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 29.08.2017թ.

թիվ 43 նիստում

ռեկտոր՝ Մ.Ա. Աստաբացյան

(ստորագրություն)

ԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 201

ԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՈՒՍԱՆՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Ուսուցման ամբողջ ժամանակահատվածում ՀԲԻ-ում կիրառվում է ուսանողների գնահատման տարբեր եղանակներ՝ հարցումներ, սեմինարներ, ռեֆերատների ներկայացում, գրավոր և թեսթային աշխատանքներ, որոնք հնարավորություն են տալիս ուսանողներին ճիշտ գնահատելու և ապահովում են ակադեմիական ազնվությունը:
Ուսանողների գիտելիքների և ակադեմիական առաջադիմության նեքին գնահատման սանդղակը կազմում է 10 միավոր, որտեղ ընդգրկված են ուսանողների հաճախումների, ինքնուրույն աշխատանքի, հարցումների և քննությունների արդյունքները: Ըստ այդ սանդղակի հաճախումների համար տրվում է 1 միավոր, հարցումների համար տրվում է 2 միավոր, ինքնուրույն աշխատանքի համար տրվում է 2 միավոր, իսկ քննական շրջանի քննությունների համար տրվում է 5 միավոր:

“10” թվանշանը համապատասխանում է 10 միավորին և 100% քննական նյութի հանձմանը: 9-10 միավորը գերազանց, 7-8 լավ, 5-6 բավարար, 0-4 անբավարար: Ուսանողը չի կարող մասնակցել քննությանը կամ ստուգարքին, եթե հաճախումների, հարցումների և թեստերի հանձման, ինքնուրույն աշխատանքներից ստացել է 5 միավորից ցածր:

Գիտելիքների վերջնական գնահատումը կատարվում է պետական ատեստավորման քննական հանձնաժողովի նախագահի կողմից, վերջինս նշանակվում է հանրապետության ճանաչված, բուհում չաշխատող մասնագետներից. Ամփոփիչ պետական քննության առաջին փուլում ստուգվում է գործնական հմտություններն ու կարողությունները, երկրորդ փուլում տեսական գիտելիքները, երրորդում բանավոր հարցման և սիտուացիոն խնդիրների միջոցով, կլինիկական մտածողությունները:

Ուսանողը կամ շրջանավարտը, անցնելով կրթական եռաստիճան համակարգը իր գիտելիքների արդյունքների հիման վրա կարող է իր հետագա աշխատանքը շարունակել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում: